# 44-օրյա պատերազմի արդյունքում Արցախից տեղահանվածների կենսափորձը

ուսումնասիրություն

# 44-օրյա պատերազմի արդյունքում Արցախից տեղահանվածների կենսափորձը

ուսումնասիրություն

# Երախտագիտության խոսք

ՀՌԿԿ-Հայաստանն իր երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ում շնորհիվ հնարավոր դարձավ հաջողությամբ իրագործել ներկայացվող զեկույցը: Մասնավորապես, դաշտային աշխատանքներն իրականացնող թիմի ներկայացուցիչներին, հարցազրուցավարներին, ինչպես նաև այն բոլոր Արցախից տեղահանվածներին, ովքեր իրենց թանկ ժամանակն են տրամադրել խորին հարցազրույցներին մասնակցելու համար՝ կիսելով իրենց կենսափորձը:

ՀՌԿԿ-Հայաստանը բարձր է գնահատում այն մասնագիտական ներդրումը, որն ունեցել է հետազոտական թիմը՝

- **Սրբուհի Միկիչյան** (զեկույցի առաջին համահեղինակ),
- **Մարիամ Բաբայան** (զեկույցի երկրորդ համահեղինակ),
- **Սոնա Բալասանյան** (հետազոտական մեթոդաբանության գծով խորհրդատու)
- **Մարիամ Առաքելյան** (խորին հարցազրույցներ իրականացնող, զեկույցի վերջնական խմբագիր),
- **Իրինա Եսայան** (խորին հարցազրույցներ իրականացնող, ամփոփագրերի մշակող, զեկույցի խմբագիր),
- **Մարիամ Եվդոկիմովա** (խորին հարցազրույցների իրականացման և ամփոփագրերի մշակման պատասխանատու):

# Բովանդակություն


- Հիմնական հասկացությունների սահմանում .....4
- Հապավումներ .....5
- Ներածություն և մեթոդաբանություն.....6
- Ակնարկ .....9
- Պատերազմի արդյունքում տեղահանվածների կենսափորձի նկարագրություն.....12
- Ամփոփում.....33
- Հավելված 1. Հետազոտության մասնակիցների կապվածությունը Արցախին .....36
- Հավելված 2. Հետազոտության մասնակիցների կապվածությունը ՀՀ-ին .....38
- Հավելված 3. Խորին հարցազրույցի ուղեցույց .....40



# Հիմնական հասկացությունների սահմանում

**Արցախյան երկրորդ պատերազմ** *(նաև՝ Հայ-ադրբեջանական պատերազմ կամ 44-օրյա պատերազմ)*. պատերազմ Արցախի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև, որը սկսվել է 2020թ. սեպտեմբերի 27-ին և ավարտվել նոյեմբերի 10-ին:

**Կենսափորձ** - փորձ և գիտելիք, որը ձեռք է բերվել որևէ իրադարձության և/կամ սեփական կյանքի ապրման միջոցով:

**Որակական հետազոտություն** - ոչ թվային տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն (տեքստ, ձայնագրություն, տեսագրություն), որն ուղղված է դրդապատճառների, փորձի, կարծիքների մասին խորը տվյալների ուսումնասիրությանը:

**Խորին հարցազրույց** - որակական հետազոտության իրականացման մեթոդ, որը ներառում է ինտենսիվ անհատական հարցազրույցներ փոքր թվով հարցվողների հետ՝ որոշակի գաղափարի կամ իրավիճակի վերաբերյալ նրանց կարծիքը կամ փորձը ուսումնասիրելու համար:

**Պիլոտային հարցազրույց** - հարցազրույց, որը նախատեսված է ոչ թե տվյալների հավաքագրման, այլ հարցաթերթի կամ հարցազրույցի ուղեցույցի ճշգրտությունն ու գործունեությունը ստուգելու համար:

**Դաշտային աշխատանք** - հետազոտության իրականացման փուլ, որի ընթացքում հետազոտողը մարդկանցից, փաստաթղթերից կամ տեղեկատվության այլ աղբյուրներից (տեսագրություն, ձայնագրություն, լուսանկար և այլն) համակարգված կերպով հավաքագրում է հետա-

զոտական տվյալներ:

**Հետազոտության ընտրանք** - հետազոտության հիմնախնդիրը կրողների ամբողջական համախմբից նախապես սահմանված սկզբունքով կազմվող միավորների խումբ, որից հետազոտողն անմիջականորեն տեղեկատվություն է հավաքագրում:

**Ձնակույտի մեթոդ** - հետազոտության ընտրանքի կազմման տեխնիկա, որի ընթացքում հետազոտողը հետազոտության մասնակիցների օգնությամբ/խորհրդով հայտնաբերում է հետազոտության մյուս հավանական մասնակիցներին:

# Հապավումներ

| | |
|---|---|
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ԱՎ | Արցախ վերադարձած |
| ՈՒ | ուժեղ արտահայտված կապվածություն |
| Թ | թույլ արտահայտված կապվածություն |
| Մ | միջին արտահայտված կապվածություն |
| Մ-ՈՒ | միջինից ուժեղ արտահայտված կապվածություն |
| Թ-Մ | թույլից միջին արտահայտված կապվածություն |
| ՏԻՄ | տեղական ինքնակառավարման մարմին |



# Ներածություն և մեթոդաբանություն

Սույն զեկույցը ներկայացնում է Արցախյան երկրորդ պատերազմի արդյունքում տեղահանված արցախաբնակների կենսափորձի ուսումնասիրության արդյունքները: Հետազոտությունը նպատակ է ունեցել ուսումնասիրել պատերազմի արդյունքում տեղահանված արցախաբնակների կենսափորձը, որում կենտրոնական են եղել վերջիններիս տեղահանման և Արցախ վերադարձի գործընթացները: Այդ նպատակի շրջանակներում կարևորվել են արցախաբնակների տեղահանման և ՀՀ-ում պատերազմի ընթացքում հաստատման գործընթացները, որոնց համատեքստում վեր են հանվել պատերազմից հետո ՀՀ-ում հաստատվելու կամ Արցախ վերադարձի դրդապատճառները:

Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում տեղահանված արցախաբնակների տեղահանման կենսափորձի ուսումնասիրության համար նախատեսված ուղեցույցը մշակվել է ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի հետազոտական թիմի կողմից: Նախքան տվյալների հավաքագրումը ուղեցույցը փորձարկվել է երկու հարցազրուցավարների կողմից՝ 1 պիլոտային խորին հարցազրույցի միջոցով: Փորձարկման արդյունքում ուղեցույցը լրամշակվել է: Այն ներառում է 32 հիմնական հարց և կազմված է հետևյալ բաժիններից՝ մինչ տեղահանման փուլ, տեղահանում, փոխօգնություն/հարմարում, հաստատում ՀՀ-ում և վերադարձ Արցախ (տե՛ս հավելված 3):

Դաշտային աշխատանքները սկսվել են 2021 թվականի մարտի 23-ին և տևել 50 օր:Իրականացվել է 16 խորին հարցազրույց Արցախյան երկրորդ պատերազմի արդյունքում Հայաստան տեղահանված քաղաքացիների հետ, որոնցից 8-ը հետազոտությունն իրականացնելու ընթացքում գտնվել են Հայաստանի Հանրապետությու-

նում, իսկ 8-ը արդեն վերադարձած են եղել Արցախ: Հարցազրույցների մասնակիցներից 3-ը արական սեռի ներկայացուցիչներ են, իսկ 16-ը՝ իգական: Նման բաշխումը պայմանավորված է հետազոտական նպատակի առանձնահատկություններով (տեղահանման փորձի առկայություն), իսկ չափահաս, ոչ թոշակառու տղամարդիկ պատերազմի ընթացքում հիմնականում չեն տեղահանվել Արցախից: Հետազոտությանը մասնակցել է 63+ տարիքային խմբին պատկանող երեք տղամարդ: Մնացած մասնակիցները հետևյալ տարիքային խմբերի իգական սեռի ներկայացուցիչներ են՝

- 22-26 տարեկաններ՝ 4 հոգի,
- 31-39 տարեկաններ՝ 5 հոգի,
- 45-57 տարեկաններ՝ 4 հոգի:

Հարցազրույցի մասնակիցները հավաքագրվել են ձնակույտի մեթոդով, ամեն խմբին պատկանող առաջին մասնակիցը ընտրվել է անձանց օգնությամբ, ովքեր հետազոտության դաշտային աշխատանքների փուլն իրականացնելու ընթացքում ապահովել են հետազոտողի հասանելիությունը որևէ խմբի անդամներին:

Դաշտային աշխատանքներին մասնակցել է խորին հարցազրույցներ իրականացնելու փորձ ունեցող 4 հարցազրուցավար: Դաշտային աշխատանքների վերահսկողությունն իրականացրել է ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի հետազոտական թիմը: Պատերազմի և տեղահանման համատեքստում կենսափորձի ուսումնասիրման հիմքում որպես գերակա գործոն կարևորվել է կորուստը: Պատերազմի հետևանքով տեղահանումը նախ և առաջ ենթադրում է սեփականության (բնակավայրի, ունեցվածի, տան և այլն) կորուստ, իսկ պատերազմը, առահասարակ, ենթադրում է մարդկային կորուստ: Այս գործոնները համադրելով՝ ստանում ենք պատերազմի ընթացքում Արցախից Հայաստան տեղահանվածների չորս խումբ, որոնք առանձնանում են հետևյալ բնութագրիչներով՝ սեփականության կորուստ ունեցող, մարդկային կորուստ ունեցող, և՛ սեփականության, և՛ մարդկային կորուստ ունեցող, կորուստ չունեցող: Քանի որ հետազոտության նպատակը Արցախից տեղահանվածների տեղահանման և Արցախ վերադառնալու փորձի ուսումնասիրությունն է եղել, այս չորս խմբերը ուսումնասիրվել են ըստ Հայաստանում բնակության հաստատման կամ Արցախ վերադարձի:Ստորև բերված աղյուսակներում ներկայացված է հարցազրույցների բաշխումն ըստ ընտրված չափանիշների՝

Աղյուսակ 1.

**Հետազոտության մասնակիցների քանակն ըստ ընտրված չափանիշների**

| | Մարդկային կորուստ ունեցող | Սեփականության կորուստ ունեցող | Ե՛վ սեփականության, և՛ մարդկային կորուստ ունեցող | Կորուստ չունեցող |
|---|---|---|---|---|
| Հայաստանում բնակվող | 2 | 2 | 2 | 2 |
| Արցախ վերադարձած | 2 | 2 | 2 | 2 |

Հետազոտության արդյունքների ուսումնասիրման համար իրականացվել է կոնտենտ վերլուծություն: Նման վերլուծության համար անհրաժեշտ է իրականացնել հավաքագրված տեղեկատվության կոդավորում: Կոդավորումը որակական տվյալների կազմակերպման գործընթաց է, որի միջոցով առանձնացվում են առանցքային թեմաները և բացահայտվում վերջիններիս միջև կապը: Կոդավորումն իրականացվել է Էնվիվո (անգլ.՝ NVivo) ծրագրի միջոցով: Հարցազրույցի ուղեցույցի փուլերին համապատասխան ստեղծվել են հիմնական կոդերը, որոնք ունեցել են նաև ենթակոդեր: Արդյունքում ստեղծվել է կոդերի ցուցակ, որով երկու վերլուծաբան միևնույն ժամանակահատվածում կոդավորել են կենսափորձերը: Յուրաքանչյուր կենսափորձի կոդավորմանը զուգընթաց կոդերի ցուցակն ըստ անհրաժեշտության համալրվել է: Նախորդ՝ արդեն իսկ վերլուծված կենսափորձերի կոդավորումը թարմացվել է՝ ըստ նոր ենթակոդերի: Յուրաքանչյուր կենսափորձի կոդավորումը ստուգվել և քննարկվել է կոդավորողների կողմից:

Հաշվետվության մեջ առկա են Արցախից տեղահանվածների կենսափորձում կոդերի կրկնության ընդհանուր թվին առնչվող նշումներ: Տվյալ նշումները նախատեսված են ընդհանուր պատկերացում կազմելու համար:Հաշվի առնելով, որ որակական հետազոտության տրամաբանությունը ենթադրում է յուրաքանչյուր անհատի կենսափորձ դիտարկել որպես մեկ տիպական դեպք, ապա նույնիսկ մեկ կենսափորձում արտահայտված կոդերը կարևոր և էական են հետազոտության համար:

Հարկ է նշել նաև, որ, կենսափորձերի յուրահատկություններից ելնելով, հաշվետվության մեջ առկա մեջբերումները վերաշարադրվել են՝ տվյալների անանունությունը պահպանելու նպատակով:



# Ակնարկ

2021թ. մարտի 15-ի դրությամբ ՀՀ-ում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբի կողմից ըստ շրջանների և համայնքների կատարվել է ՀՀ-ում ժամանակավոր (փաստացի) բնակվող Արցախից տեղահանված բնակչության թվաքանակի նախնական հաշվարկ:

Աղյուսակ 2.

**Պատերազմից հետո ՀՀ-ում բնակվող տեղահանվածներ1**

| ԱՀ շրջաններ | Պատերազմից հետո ՀՀ-ում փաստացի բնակվող տեղահանված բնակչության թվաքանակ |
|---|---|
| Հադրութի շրջան | 2388 ընտանիք՝ 8575 անձ |
| Մարտակերտի շրջան | 57 ընտանիք՝ 309 անձ |
| Շուշիի շրջան | 410 ընտանիք՝ 1632 անձ |
| Ասկերանի շրջան | 95 ընտանիք՝ 411 անձ |
| Մարտունու շրջան | 96 ընտանիք՝ 424 անձ |
| Շահումյանի շրջան | 540 ընտանիք՝ 2772 անձ |
| Քաշաթաղի շրջան | 2720 ընտանիք՝ 10329 անձ |

*Պետական մակարդակում եղել են արցախցիներին աջակցության մի քանի նախագծեր, որոնցից առաջին խումբը ֆինանսական աջակցության ծրագրերն են:* 2020թ. նոյեմբերի 20-ին հաստատվել է աջակցության ծրագիրը[2]:

1. Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբ, Տարածաշրջանային բաժին «ՀՀ-ում ժամանակավոր (փաստացի) բնակվող Արցախից տեղահանված բնակչության թվաքանակի վերաբերյալ նախնական հաշվարկ»

2. ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարություն: Սոցիալական աջակցության ծրագիր՝ Արցախի տեղահանված քաղաքացիներին https://www.mlsa.am/?p=26970

Ծրագրի շրջանակում 68 հազար դրամ է տրամադրվել բոլոր այն արցախցիներին, որոնք 2020թ. նոյեմբերի 16-ի դրությամբ գտնվում էին Հայաստանի Հանրապետությունում կամ վերադարձել էին Արցախ: Գումարը տրամադրվել է ընտանիքի յուրաքանչյուր անդամին:

Բացի 68 հազար դրամից՝ շահառուին տրվել է լրացուցիչ ևս 15 հազար դրամ, եթե նա Հայաստանի Հանրապետությունում չունի անշարժ գույք (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերը):

2020թ. դեկտեմբերիի 2-ին մեկնարկել է նաև արցախցիների միանվագ դրամական աջակցության ծրագրերից արցախցիներին սոցիալական աջակցության տրամադրման երկրորդ ծրագիրը[3]: Ծրագրով նախատեսված միանվագ դրամական աջակցությունից օգտվել են Արցախի վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված բոլոր քաղաքացիները, որոնք առնվազն վերջին երեք ամիսը փաստացի բնակվել են այդ համայնքներում: Աջակցությունը ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար կազմել է 300,000 դրամ:

Հաջորդ միանվագ աջակցության ծրագիրը ընդունվել է 2020թ. դեկտեմբերի 10-ին[4], ըստ որի Արցախի Հանրապետության քաղաքացիներին տրամադրվելու էր 250 հազար դրամ միանվագ աջակցություն, եթե նրանց բնակելի անշարժ գույքը պատերազմական ավերածությունների հետևանքով կամ այլ պատճառներով դարձել էր բնակության համար ոչ պիտանի:

Բացի վերը նշվածից, պետական մակարդակում առկա են եղել ֆինանսական աջակցության ծրագրեր, որոնք տրամադրվել են հարկադիր տեղահանված արցախցիներին ժամանակավորապես հյուրընկալողներին: Նման ծրագիր *ընդունվել է* 2020թ. դեկտեմբերի 4-ին, որի հիմնական շահառու են հանդիսանում Արցախի վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողները[5]: Արցախից հյուրընկալված յուրաքանչյուր քաղաքացու համար նախատեսվում էր տրամադրել Հայաստանում՝ 30,000 դրամ, Արցախում՝ 45,000 դրամ:

Ինչ վերաբերում է հարկադիր տեղահանված արցախցիների զբաղվածության ապահովմանը, ապա սրա վերաբերյալ առաջին նախագիծը հաստատվել է 2020թ.

3. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն; «Մեկնարկել է արցախցիներին սոցիալական աջակցության տրամադրման երկրորդ ծրագրի դիմումների ընդունման գործընթացը»; [դիտված՝ 20.04.21] ; Աղբյուր՝ https://www.mlsa.am/?p=26646

4. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն; «250 հազար դրամ՝ ավերածությունների հետևանքով անշարժ գույքը կորցրած արցախցիներին»; [դիտված՝ 20.04.21]; Աղբյուր՝ https://www.mlsa.am/?p=26711

5. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն; «Արցախի վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողներին կտրվի վեցամսյա սոցիալական աջակցություն»; [դիտված՝ 20.04.21] ; Աղբյուր՝ https://www.mlsa.am/?p=26679

դեկտեմբերի 17-ին[6]: Միջոցառումը նախատեսել է Արցախի գործազուրկ քաղաքացուն ընդգրկել համայնքներում իրականացվող վարձատրվող հասարակական աշխատանքներում և մեկ աշխատանքային օրվա համար վճարել 8,000 դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և պարտադիր վճարները:Մեկ այլ նախագիծ[7] ուղղված է եղել պատերազմի հետևանքով տեղահանված և ՀՀ-ում գտնվող գործազուրկ արցախցիներին աջակցություն տրամադրելուն, աշխատանքային փորձ ձեռք բերելուն: Գործազուրկ անձը միջոցառման շահառու է դարձել մեկ անգամ 3 ամիս ժամկետով և ստացել ամսական մաքուր աշխատավարձ՝ 100,000 դրամի չափով:



# Պատերազմի արդյունքում տեղահանվածների կենսափորձի նկարագրություն

Հետազոտությունը նպատակ է ունեցել ուսումնասիրել Արցախյան երկրորդ պատերազմի արդյունքում Արցախից Հայաստան տեղահանված հետևյալ 4 խմբերի կենսափորձը՝ մարդկային կորուստ ունեցողներ, սեփականության կորուստ ունեցողներ, և՛ մարդկային, և՛ սեփականության կորուստ ունեցողներ և կորուստ չունեցողներ:

Ճգնաժամային պայմաններում կարևոր է քննարկել տեղահանվածների կենսափորձը հետևյալ փուլային հաջորդականությամբ՝ պատերազմի սկիզբ, տեղահանում, հաստատում Հայաստանում կամ վերադարձ Արցախ:

Անդրադառնալով կենսափորձում պատերազմի սկզբնական փուլին՝ նախ և առաջ ներկայացնենք հետազոտության մասնակիցների՝ պատերազմի մասին պատկերացումների փոփոխությունները: Այդ պատեկարցումները փոփոխվել են տարբեր իրադարձությունների ազդեցությամբ: Պատերազմի բռնկման առաջին րոպեները հետազոտության մասնակիցները հիմնականում նույնականացրել են ոչ պատերազմական գործողությունների հետ (հրավառություն, վերանորոգման աշխատանքներ, մեքենայի ձայներ): Այնուհետև պատերազմի առաջին պատկերացումները եղել են.

- նույնականացում Ապրիլյան պատերազմին/կարճատև ռազմական գործողությունների պատկերացումներ (կենսափորձերի հանրագումարում շեշտվում է 11 անգամ),
- լայնամասշտաբ պատերազմի պատկերացումներ (կենսափորձերի հանրագումարում շեշտվում է 3 անգամ):

> ***Չեմ կարա հիմա բացատրեմ, բայց միանգամից Ապրիլյանն եմ հիշել, էլի նույն ձայները, բան...***
>
> *(Կորուստ չունեցող, իգական, 26 տարեկան, ՀՀ տեղափոխված)*

> ***Չենք պատկերացրել, որ երկար կտևի, Ապրիլյանին ենք խաբվել երևի...***
>
> *(Մարդկային կորուստ, իգական, 31 տարեկան, Արցախ վերադարձած)*

> ***Նենց քնից որ արթնանում ես, մտածում ես, որ երևի դեռ մութ ա, հրավառության ձայներ են, ու դեռ փորձում ես շարունակես քնես, բայց հետո աչքերս բացեցի տեսնեմ, որ լույս ա, ի՞նչ հրավառություն...***
>
> *(Կորուստ չունեցող, իգական, 22 տարեկան, ՀՀ տեղափոխված)*

Կարևոր է նշել, որ հետազոտության այն մասնակիցները, որոնք սկսվող ռազմական գործողությունները առաջին օրերին նույնականացրել են լայնամասշտաբ պատերազմի հետ, ականատես են եղել Ստեփանակերտի հրետակոծությանը, ինչը շեղել է ասոցիացիաները 2016թ. Ապրիլյան պատերազմից:

> ***Արդեն տեսել եմ, որ քաղաքի վրա են խփում, օրինակ, 16 թ-ին որ սկսել են [խմբ. խոսքը գնում է Ապրիլյան քառօրյա պատերազմի մասին], էտ աստիճանի չի եղել, Ստեփանակերտից չեն սկսել, բայց էս մեկը, որ արդեն քաղաքի վրա ա եղել, արդեն ես պատկերացրել եմ...***
>
> *(Ե՛վ սեփականության, և՛ մարդկային կորուստ, իգական, 39 տարեկան, ՀՀ տեղափոխված)*

> ***Տենց ինքն էլ եկավ, ասեց Ստեփանակերտին են խփել, ասինք ո՞նց, մայրաքաղաքի՞ն: Ու էդ պահին զգում ես էլի, որ չէ, մի քիչ Ապրիլյանից տարբերվում ա, որովհետև հա՛ էն անգամ էլ նենց ահավոր խփում էին... Բայց մայրաքաղաքի՞ն, էդ մի քիչ արդեն զգում էս, որ չէ, էլի, արդեն մի քիչ լայն ա...***
>
> *(Մարդկային կորուստ, իգական, 26 տարեկան, Արցախ վերադարձած)*

Ուսումնասիրված 16 կենսափորձում պատերազմի վերաբերյալ պատկերացումների փոփոխությունները տեղի են ունեցել մի շարք դեպքերի ազդեցությամբ, որոնցից հատկապես ընդգծվել է մարդկային կորստի առկայությունը: Մարդկային կորուստ չունեցողների՝ կարճաժամկետ պատերազմի պատկերացումները հիմնականում պահպանվել են մինչ պատերազմի ավարտը, իսկ մարդկային կորուստ ունեցողներինը փոխվել են հարազատին կորցնելու օրվանից սկսած:

Երկրորդ էական գործոնը, որը պայմանավորել է պատերազմի վերաբերյալ պատկերացումների փոփոխությունը, այլընտրանքային լրատվամիջոցներին հետևելն է, որտեղ ներառվել են ինչպես հակառակորդի լրատվամիջոցները, այնպես էլ առաջնագծում եղած անձնական աղբյուրները:

Ստորև ներկայացված են պատերազմի վերաբերյալ պատկերացումների փոփոխության վրա ազդող հիմնական գործոնները.

- մարդկային կորստի մասին լուր (հարազատի և/կամ ծանոթի, շեշտվում է 5 մասնակցի կողմից),
- ծանոթներից և/կամ այլ աղբյուրից կոնկրետ տեղեկություններ (տարածքների հանձնման, առաջնագծում դրության մասին, շեշտվում է 5 մասնակցի կողմից),
- 44-օրյա պատերազմի ընթացքում զինադադարի խախտումներ (շեշտվում է 3 մասնակցի կողմից),
- կոնկրետ ռազմական գործողություններին ականատես լինելը (եկեղեցու ռմբակոծություն, հիվանդանոցի ռմբակոծություն, շեշտվում է 2 մասնակցի կողմից),
- սեփականության կորուստ (շեշտվում է 1 մասնակցի կողմից):

Ուսումնասիրելով ճգնաժամային իրավիճակում անհատների գործողությունների առանձնահատկությունները՝ կարելի է եզրահանգել, որ, պատերազմի իրողությունը գիտակցելուց հետո, տեղահանվածների կենսափորձում առանձնացել են հետևյալ առաջին գործողությունները.

- պատսպարում նկուղում/տանը (ընդհանուր առմամբ շեշտվում է 6 անգամ),
- հեռացում հիմնական բնակավայրից (ժամանում Ստեփանակերտ, կամ հարազատների տուն՝ մի վայր, որը ռազմական գործողություններից համեմատաբար հեռու կամ ապահով է դիտարկվել, մասնակիցների կողմից շեշտվում է 6 անգամ),
- ծանոթներին և իրավիճակին առնչվող տեղեկատվության հավաքագրում (ընդհանուր առմամբ շեշտվում է 4 անգամ),
- մասնակցություն պատերազմին (ըստ մասնագիտության՝ բժիշկներ, նախկինում ռազմական կրթություն ունեցողներ, ընդհանուր առմամբ շեշտվում է 2 անգամ):

Հատկանշական է, որ տեղահանվածների կենսափորձում խուճապի ակնառու արտահայտում դրսևորվել է միայն 1 դեպքում:

Պատերազմի մասին պատկերացումների փոփոխությունը և տեղահանվածների առաջնային քայլերը կարևոր նշանակություն են ունեցել հետագայում նրանց տեղահանման գործընթացում: Քանի որ պատերազմը սկզբնական շրջանում նույնականանում էր, օրինակ, Ապրիլյան պատերազմի կամ կարճաժամկետ գործողությունների հետ, բնակիչները հիմնականում տեղափոխվել են Արցախում գտնվող ոչ սահմանամերձ տարածքներ: Այն փուլում, երբ նույնականացումը կարճաժամկետ ռազմական գործողություններին դադարել է, սկսվել է տեղացիների տեղահանումը Հայաստանի Հանրապետություն: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ Արցախից ՀՀ տեղահանման ամենահաճախ հանդիպող ժամանակահատվածը առաջին 1-1,5 շաբաթն է, ընդ որում, տեղահանման որոշումը եղել է ինչպես հարկադրված, այնպես էլ՝ կամավոր: Ստորև կարող ենք տեսնել պատերազմի ընթացքում Արցախից Հայաստան տեղահանման հիմնական ժամանակահատվածները՝ ըստ ամենատարածված պատասխանի.

- պատերազմի բռնկման առաջին երեք օրերի ընթացքում (շեշտվում է 5 դեպքում),

- սեպտեմբերի 30-ից մինչ հոկտեմբերի 10-ը (շեշտվում է 7 դեպքում),
- հոկտեմբերի 11-ից մինչ հոկտեմբերի վերջը (շեշտվում է 3 դեպքում),
- պատերազմի վերջին օրերին (շեշտվում է 1 դեպքում):

Տեղահանման փուլի վերլուծության արդյունքում դուրս են բերվել Արցախից տեղահանվելու հետևյալ հիմնական դրդապատճառները.

- հարկադրվածություն (այլընտրանքների բացակայություն, օրինակ, վատ պայմաններ նկուղում, նկուղի բացակայություն, խնամակալների բացակայություն տանը, բնակավայրը լքելու կարգադրություններ, վիրավոր հարազատ, ընդհանուր առմամբ շեշտվում է 13 անգամ),
- տեղահանում հարազատների/ծանոթների խորհրդով (ընդհանուր առմամբ շեշտվում է 11 անգամ),
- վախ (ընդհանուր առմամբ շեշտվում է 8 անգամ),
- սեփականության կորուստ (ընդհանուր առմամբ շեշտվում է 2 անգամ),
- մարդկային կորուստ ( շեշտվում է 1 դեպքում):

Տեղահանման պատմություններում առկա է միայն մեկ դեպք, երբ տեղահանվողի առաջնային դրդապատճառը եղել է օգնել ծանոթին տեղափոխվել ՀՀ՝ հետագայում Արցախ վերադառնալու ակնկալիքով, սակայն, հասնելով Երևան, վերջինս խորհուրդ է ստացել մնալ այնտեղ և չվերադառնալ Արցախ:

Հարցվողների կենսափորձում մանրամասն նկարագրվում են նաև վերջիններիս տեղահանման ճանապարհը և խոչընդոտները: Այն տեղահանվածների կենսափորձում, որոնք ունեցել են պատերազմին մասնակից մոտ հարազատներ (որդի, ամուսին, եղբայր) առկա է *դավաճանության և մեղքի զգացման արտահայտում:*

> ***Կակ բուդտո գիտեմ, թե իմ երեխոցս դավաճանում եմ, դե էն ժամանակ [որդու անունը] ողջ ա եղել, գիտեմ թե գնամ՝ հետևիցս բանա պատահելու... դե տենց էլ եղել ա...***
>
> *(Մարդկային կորուստ, իգական, 45 տարեկան, ՀՀ տեղափոխված)*

> ***Մենք, ասենք, դավաճանում ենք մեր ծնողներին..., որ գնում ենք: Ահավոր էր, անկեղծ եմ ասում, ամբողջ ճանապարհին համարյա լացում էինք: Ու տենց... էն որ դավաճանի նման գնում ենք...***
>
> *(Մարդկային կորուստ, իգական, 26 տարեկան, Արցախ վերադարձած)*

Բացի այդ նկատելի է դառնում, որ հարցազրույցի մասնակիցների մեծ մասը գրեթե ոչ մի իր չի վերցրել՝ վերադառնալու ակնկալիքով:Արցախից տեղահանման արդյունքում տեղահանվածների կենսափորձերից 13-ում շեշտվում են Արցախում մնացած արժեքավոր հետևյալ իրերը.

- հուշեր պարունակող իրեր (Նկարներ, լուսանկարներ, հարազատի գերեզման, շեշտվում է 8 դեպքում),
- սեփականություն (մեքենա, հողատարածք, մանր/խոշոր եղջերավոր անասուններ, տուն, խանութ և այլն, շեշտվում է 4 դեպքում),
- հոգևոր իրեր (Աստվածաշունչ, շեշտվում է 1 դեպքում),
- փաստաթղթեր (շեշտվում է 1 դեպքում),
- թանկարժեք իրեր (շեշտվում է 1 դեպքում),
- ընտանի կենդանի (շեշտվում է 1 դեպքում):

Նրանք, ովքեր ունեցել են մարդկային կորուստ, որպես հիմնական արժեքավոր իրեր ավելի շատ կարևորել են հուշերը՝ մարդկանց նկարները: Նրանք, ովքեր ունեցել են սեփականության կորուստ կամ կորուստ չեն ունեցել, շեշտադրել են սեփականությունը կամ այլ նյութական բարիքներ:

Իրականացված հարցազրույցների 13 դեպքից 9-ի պարագայում Արցախից Հայաստան տեղահանվածները (որոնք հաստատվել են Հայաստանում) չեն կարող վերադարձնել իրենց արժեքավոր իրերը, քանի որ դրանք կապված են ունեցած սեփականության հետ կամ գտնվել են տանը և ռազմական գործողությունների արդյունքում անցել են Ադրբեջանի վերահսկողության տակ: Արցախում մնացած արժեքավոր իրերի մասին չի հիշատակվում 3 կենսափորձում (մեկը՝ Արցախ վերադարձած մարդկային կորուստ ունեցողի, երկուսը՝ Արցախ վերադարձած կորուստ չունեցողների):

Հետազոտության արդյունքում Հայաստան տեղափոխվելու ընթացքում և դրանից հետո տեղահանվածներին աջակցողները բաժանվել են հետևյալ խմբերի.

- անհատներ (ընդհանուր առմամբ շեշտվում է 69 անգամ),
  - ծանոթներ ՀՀ-ում *(38 անգամ)*,
  - անծանոթներ ՀՀ-ում *(13 անգամ)*,
    - Հայաստանում բնակվողներ *(7 անգամ)*,
    - արտասահմանում բնակվողներ *(6 անգամ)*,
  - արցախաբնակներ *(3 անգամ)*,
- պետական ծառայություններ(ընդհանուր առմամբ շեշտվում է 24 անգամ),
  - ՏԻՄ-եր *(17 անգամ)*,
  - նախարարություններ *(7 անգամ)*,
- հիմնադրամներ (ընդհանուր առմամբ շեշտվում է 3 անգամ):

Վերը նշվածից հասկանում ենք, որ Հայաստան տեղափոխվելու և ընթացքում աջակցություն ստանալու գործընթացում տեղահանվածների կենսափորձում ամենահաճախը հիշատակվում է օգնությունն անհատներից, այնուհետև՝ պետական կառույցներից: Հետազոտությանը մասնակցած 16 տեղահանվածներից 14-ը ծանոթներ են ունեցել ՀՀ-ում, որոնց օգնությունն ու աջակցությունը կարևոր դեր է կատարել նրանց՝ Հայաստանում հաստատման գործընթացներում:

> ***Մորքուրիս, մամայի քեռու ընտանիքն էր: Իրանք մեզ ամեն ինչով ապահովում էին, անընդհատ գնում, գալիս, զանգում, տենց իրանք են օգնել շատ... Ես նոր էի գնացել, ոչ մի բան հետս չէի վերցրել: Մտանք խանութ ասեց՝ ինչ-որ պետք ա վերցրու, ինքը վճարեց, հետո տարավ իրանց տուն...***
>
> *(Կորուստ չունեցող, իգական, 22 տարեկան, ՀՀ տեղափոխված)*

> ***Մեր երեխու ընկերոջ տանն ենք մնացել, ամեն առավոտ գալիս էր սառնարանի դուռը բացում տենա ուտելիքը քչացել ա, որ նորից բերի լցնի, չի թողել, որ մենք գումար ծախսենք...***
>
> *(Սեփականության կորուստ, արական, 70 տարեկան, Արցախ վերադարձած)*

Անծանոթներից օգնությունը նույնպես կարևոր դեր է խաղացել տեղահանման սկզբնական փուլերում:

> ***ֆեյսբուքում էդ աղջկա համարը գրած էր, զանգեցինք, դրանից հետո էդ աղջիկն էլ շատ հետաքրքրվեց, ահագին ծանոթներ գտավ, ամեն ինչով օգնեցին՝ էլ սնունդով, էլ հագուստով, դեղն էլ էին իրանք, ամեն ինչ, առնում բերում, ամեն ինչով օգնել էին մեզ, չէինք պատկերացնում, միշտ ասում էինք երևանցին, հայաստանցին ինչ պիտի անեին, էդ բանը չգիտեմ, միշտ ասում էինք, բայց որ եկանք տեսանք էդ հարգանքը, էդ ամեն ինչը, ամեն ինչ իսկույն փոխվեց, ասում են մեկա ամեն տեղ լավն էլ կա, վատն էլ կա, շատ- շատ լավ հյուրընկալեցին, շատ...***
>
> *(Մարդկային կորուստ, իգական, 31 տարեկան, ՀՀ տեղափոխված)*

Արտասահմանում բնակվող անհատներից ստացված օգնությունը հիմնականում եղել է ֆինանսական և կեցության վայրի համար:

> ***Էտ տղան առաջարկել ա կնոջս՝ «[տեղանուն] մենք տուն ունենք, կարաք գնաք, մեջը ապրեք, մենք հեն ենք [արտասահմանյան տեղանուն] էլի»: Դե էս տունը մեզ ա տվել, դե հենա մեջը ապրում ենք էլի, բայց ժամանակավոր, հեսա պիտի դուրս գանք...***
>
> *(Սեփականության կորուստ, արական, 63 տարեկան, ՀՀ տեղափոխված)*

> ***Սփյուռքից մի աղջիկ 6 ամիս ա ինձ օգնում ա, 100 դոլար, 150, ինչքան կարողանում ա օգնություն ուղարկում ա: Մի բարերար էլ երեխաների համար հատուկ նվերներ ուղարկեց...***
>
> *(Մարդկային կորուստ, իգական, 31 տարեկան, ՀՀ տեղափոխված)*

Մասնակիցները պետական մակարդակում նշանակալի օգնություն են ստացել Տեղական ինքնակառավարման մարմիններից (ՏԻՄ)-երից (ավելի մանրամասն՝ տե՛ս հավելված 2):

> ***Մենք որ եկանք, [անուն] տանն էինք մնում, հետո մեզ հյուրանոց տարան [խմբ. նկատի ունենալով ՏԻՄ ներկայացուցիչները տարան], ու մենք էնտեղ էինք մնում, առանց վճարի, իրանք էին ամեն ինչը ապահովում, մենք ոչինչ չէինք տալիս, ըդտեղ մնացինք մինչև վերջ, մինչև ստեղ հետ գալը...***
>
> *(Մարդկային կորուստ, իգական, 31 տարեկան, Արցախ վերադարձած)*

> ***Երկրորդ կեսն էր պատերազմի, ասեցին թաղապետարաններում կա [խմբ. օգնություն], պետք ա գրանցվեք, իրանք սնունդ-բան բերում են: Մենք գնացինք, գրանցվեցինք, առաջին անգամ, որ թաղապետարանը տվեց, էդ բրինձ, գրեչկա, ձեթ, տենց բաներ էին, հիգիենայի պարագաներ դեռ չկար... հետո, որ արդեն ավելի անցավ ժամանակ, դա էլ սկսեցին բերել... Ինչքան անցնում էր պատերազմից ու մարդիկ քչանում էին, էդքան ոնց որ ավելի շատ մեզ բան բերեին...***
>
> *(Կորուստ չունեցող, իգական, 22 տարեկան, ՀՀ տեղափոխված)*

Ուսումնասիրված 16 պատմություններից 7-ում Արցախից տեղափոխված անհատների կենցաղային պայմանները տեղահանման սկզբնական փուլում եղել են անբավարար, որից միայն մեկ դեպքում հետագայում կենցաղային պայմանները չեն

բարեկարգվել (ավելի մանրամասն՝ տե՛ս հավելված 2): Անբավարար կենցաղային պայմանները տեղահանվածների կենսափորձում ամենահաճախը նկարագրվում էին անձնական տարածքի և բարեկամների տանը ազատ գործառնելու հնարավորությունների բացակայությամբ: Հենց այս գործոնների ապահովումն է պայմանավորել կենսափորձում կենցաղային պայմանների վերաբերյալ պատկերացումների փոփոխությունը՝ բացասականից դրականի:

Պատերազմի ավարտից հետո, տարբեր նախապայմանների ազդեցությամբ, արցախցիները որոշել են կա՛մ մնալ Հայաստանում, կա՛մ վերադառնալ Արցախ:

Հայաստանում մնացած արցախցիների՝ Արցախ չվերադառնալու հիմնական դրդապատճառները հետևյալներն են.

- վախ Արցախում ապրելուց (շեշտվում է 4 դեպքում),
- հեռանկարների կորուստ (շեշտվում է 3 դեպքում),
- սեփականության կորուստ (շեշտվում է 3 դեպքում),
- Եռաբլուրում հուղարկավորված զոհված հարազատ (շեշտվում է 2 դեպքում),
- կախվածություն ընտանիքի անդամներից (շեշտվում է 1 դեպքում):

Ինչ վերաբերում է Արցախ վերադառնալու դրդապատճառներին, ապա, ըստ հետազոտության արդյունքների, դրանք հետևյալներն են.

- սեփականություն Արցախում (շեշտվում է 3 դեպքում),
- զբաղվածություն Արցախում (շեշտվում է 3 դեպքում),
- պատերազմի արդյունքում մահացած հարազատի գերեզման Արցախում (շեշտվում է 2 դեպքում),
- օգնող ծանոթներ/հարազատներ Արցախում (շեշտվում է 2 դեպքում),
- կապվածություն միջավայրին (շեշտվում է 2 դեպքում),
- կախվածություն ընտանիքի անդամներից (շեշտվում է 2 դեպքում),
- մեղքի և պատասխանատվության զգացում (շեշտվում է 1 դեպքում),
- աջակցության ծրագրերից օգտվելու համար (շեշտվում է 1 դեպքում):

Այժմ անդրադառնանք նրան, թե ինչպիսի պայմաններ են կարևորվել Արցախից տեղահանված տարբեր խմբերի՝ Արցախ վերադառնալու կամ չվերադառնալու որոշումների կայացման գործընթացում: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ տեղահանված արցախաբնակների կենսափորձում կարևոր է հաշվի առնել հետևյալ գործոնների արտահայտման յուրահատկությունները՝ կապվածություն Արցախին, կապվածություն Հայաստանի Հանրապետությանը (սրան առնչվող մի քանի գործոններ քննարկվել են արդեն վերևում), հիասթափության մակարդակ, ապագայի նկատմամբ վախ և անորոշություն:

Կապվածությունն Արցախին (տե՛ս Աղյուսակ 3) և Հայաստանի Հանրապետությանը (տե՛ս Աղյուսակ 4) գնահատելու համար Արցախից տեղահանվածների կենսափորձում դիտարկվել են յուրաքանչյուր գործոնին առնչվող կոդերը, որոնց ցուցակը կարող եք տեսնել ստորև ներկայացված աղյուսակներում: Կապվածության գնահատումը դիտարկվել է երեք մակարդակում՝ որպես ուժեղ, միջին կամ թույլ արտահայտված: Աղյուսակները ցույց են տալիս, թե ինչ գործոններ պետք է առկա լինեն ամեն մակարդակի բավարարման համար: Աղյուսակի ձախ կողմում նշված են կապվածությանն առնչվող գործոնները, իսկ աջ կողմում գնահատված է յուրաքանչյուր գործոնի առկայության կամ բացակայության անհրաժեշտությունն ըստ մակարդակների: Եթե գործոնը առկա է տվյալ մակարդակում, ապա դրա դիմաց դրվում է «+» նշանը, եթե գործոնը բացակա է՝ «-» նշանը: «+/-» նշանը դրվում է այն դեպքում, երբ գործոնի առկայությունը մակարդակի արտահայտման համար հնարավոր, սակայն ոչ պարտադիր պայման է:

Այս գործոնների հիման վրա Արցախից տեղահանված խմբերն ըստ սահմանված 4 չափանիշի *(սեփականության կորուստ, մարդկային կորուստ, Արցախ չվերադարձած, Արցախ վերադարձած)* գնահատվել են Արցախին և Հայաստանին կապվածության երեք մակարդակում: Գնահատմանը կարող եք ծանոթանալ հավելվածներ 1 և 2-ում:

Աղյուսակ 3.

| Կապվածությունն Արցախին | Թույլ | Միջին | Ուժեղ |
|---|---|---|---|
| Անձնական մասնակցություն պատերազմին | - | - | +/- |
| Ընտանիքի անդամի մասնակցություն պատերազմին | +/- | + | + |
| Հարաբերություններ շրջապատի հետ | + | +/- | + |
| Բնակության վայրին մոտ ծառայությունների/հարմա-րությունների առկայություն (դպրոց, մանկապարտեզ, հիվանդանոց...) | +/- | +/- | +/- |
| Մասնակցություն համայնքային իրադարձություններին | - | +/- | +/- |
| Տուն/բնակարան Արցախում պատերազմից առաջ | - | + | + |
| Այլ սեփականություն (խոշոր եղջերավոր անասուններ, խանութ, հողատարածք) պատերազմից առաջ | - | +/- | + |
| Սեփականություն Արցախում պատերազմից հետո | - | +/- | + |
| Աշխատանք Արցախում պատերազմից առաջ | - | +/- | + |
| Աշխատանք Արցախում պատերազմից հետո | - | - | +/- |
| Ընտանիքի անդամների զբաղվածություն Արցախում | -/+ | + | + |
| Հեղինակություն համայնքում | - | - | + |
| Հարազատի աճյուն/հուշ Արցախում | - | + | + |
| Հարազատներ/բարեկամներ Արցախում | +/- | +/- | +/- |
| Մասնակցություն Առաջին Արցախյան պատերազմին | - | - | +/- |
| Արցախում մնացած արժեքավոր իրեր | - | +/- | + |
| Պատերազմից հետո Արցախում հասանելի տեղեր, որոնց հետ կապված կան ուժեղ հիշողություններ | - | +/- | + |

Աղյուսակ 4.

| Կապվածությունը ՀՀ-ին | Թույլ | Միջին | Ուժեղ |
|---|---|---|---|
| Հայաստանաբնակների վերաբերմունք | - | +/- | + |
| Օգնող ծանոթներ/հարազատներ Հայաստանում | +/- | + | + |
| Անծանոթների օգնություն/աջակցություն (նյութական, ֆինանսական) | - | +/- | + |
| Նյութական աջակցություն պետության կողմից | +/- | +/- | + |
| Ֆինանսական աջակցություն պետության կողմից | - | +/- | + |
| Ֆինանսական կարգավիճակ | - | - | + |
| Առողջական աջակցություն | +/- | +/- | +/- |
| Առանձին կացարանի տրամադրում | - | +/- | + |
| Ժամանակավոր կացարանի վարձակալում | + | - | - |
| Զբաղվածություն Հայաստանում | - | +/- | + |
| Զբաղվածության հնարավորություն հետագայում | - | +/- | +/- |
| Տուն/բնակարան Հայաստանում | - | - | + |
| Հարաբերություններ հարևանների հետ | - | +/- | +/- |
| Կենցաղային պայմաններ Հայաստան տեղափոխվելու սկզբնական շրջանում | - | +/- | + |
| Կենցաղային պայմաններ Հայաստանում հաստատվելուց հետո | - | +/- | +/- |
| Հստակ կարգավիճակ | +/- | +/- | +/- |
| Հարազատի աճյուն Եռաբլուրում | - | +/- | + |

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ միայն մարդկային կորուստ ունեցողները հիմնականում ուժեղ արտահայտված կապվածություն են ունեցել Արցախին և միջին արտահայտված կապվածություն ՀՀ-ին:Միայն սեփականության կորուստ ունեցողները հիմնականում ունեցել են ուժեղ արտահայտված կապվածություն Արցախին և միջին կամ թույլ արտահայտված կապվածություն ՀՀ-ին: Ե՛վ մարդկային, և՛ սեփականության (երկակի) կորուստ ունեցող մասնակիցներն ունեցել են հիմնականում միջին արտահայտված կապվածություն Արցախին և ուժեղ արտահայտված կապվածություն ՀՀ-ին: Ենթադրաբար կորստի մեծացմանը զուգահեռ ավելի ուժեղ է արտահայտվել կապվածությունը ՀՀ-ին:

Կորուստ չունեցողները երկու դեպքում (ՀՀ տեղափոխվածներ) ունեցել են թույլ արտահայտված կապվածություն Արցախին և ուժեղ արտահայտված կապվածություն ՀՀ-ին, իսկ մյուս երկու դեպքում (Արցախ վերադարձածներ)՝ ուժեղ արտահայտված կապվածություն Արցախին և թույլ ու միջին արտահայտված կապվածություն ՀՀ-ին (տե՛ս Աղյուսակ 5):

Աղյուսակ 5.

**Հարցազրույցի մասնակիցների՝ Արցախին և ՀՀ-ին կապվածության արտահայտման մակարդակները**

| | Մարդկային կորուստ | | | | Սեփականության կորուստ | | | | Սեփականության և Մարդկային կորուստ | | | | Կորուստ չունեցող | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ | | ԱՎ | | ՀՀ | | ԱՎ | | ՀՀ | | ԱՎ | | ՀՀ | | ԱՎ | |
| | 1.1 | 1.2 | 1.3 | 1.4 | 2.1 | 2.2 | 2.3 | 2.4 | 3.1 | 3.2 | 3.3 | 3.4 | 4.1 | 4.2 | 4.3 | 4.4 |
| Կապվածությունն Արցախին | Մ-ՈՒ | ՈՒ | ՈՒ | ՈՒ | ՈՒ | Թ-Մ | ՈՒ | ՈՒ | Մ | Մ | Մ-ՈՒ | Մ | Թ | Թ-Մ | ՈՒ | ՈՒ |
| Կապվածությունը ՀՀ-ին | Թ-Մ | Մ | Թ-Մ | Մ-ՈՒ | Մ | Մ-ՈՒ | Թ | Թ | Մ-ՈՒ | ՈՒ | ՈՒ | ՈՒ | ՈՒ | ՈՒ | Թ | Մ |

** Գնահատումների մանրամասները յուրաքանչյուր խմբի համար տե՛ս հավելվածներ 1 և 2-ում: Հապավումների բացատրություն՝ ՀՀ- Հայաստան տեղափոխված, ԱՎ- Արցախ վերադարձած, ՈՒ- ուժեղ արտահայտված կապվածություն, Թ-թույլ արտահայտված կապվածություն, Մ- միջին արտահայտված կապվածություն, Մ-ՈՒ- միջինից դեպի ուժեղ արտահայտված կապվածություն, Թ-Մ- թույլից դեպի միջին արտահայտված կապվածություն*

## Կապվածությունն Արցախին

Նրանք, ովքեր ուժեղ արտահայտված կապվածություն ունեին Արցախին, հիմնականում վերադարձել են Արցախ, կամ առնվազն պլանավորում են վերադառնալ: Նրանք, ովքեր ուժեղ արտահայտված կապվածություն ունեն Արցախին, սակայն դեռևս չեն վերադարձել, ունեն սեփականության կորուստ և սպասում են վերադարձի հնարավորությունների:

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ, ըստ հետազոտության մասնակիցների, Արցախին կապվածության համար ամենաազդեցիկն են՝ *(1)մահացած հարազատի գերեզմանը Արցախում, (2)պատերազմից հետո Արցախի հասանելի տարածքները, որոնց հետ կապված կան ուժեղ հիշողություններ, (3)Արցախում հաստատման հեռանկարները, որոնք կապվում են այնտեղ զբաղվածություն գտնելու հնարավորությունների, հեղինակության և ծանոթների առկայության հետ և (4) սեփականության առկայությունը Արցախում:*

Հետազոտության այն  մասնակիցները, որոնք ունեցել են միայն մարդկային կորուստ, հիմնականում ուժեղ արտահայտված կապվածություն են ունեցել Արցախին: Դա նախ և առաջ պայմանավորված է Արցախում պատերազմի արդյունքում զոհված հարազատի գերեզմանի և սեփականության առկայությամբ:

Ինչ վերաբերում է միայն սեփականության կորուստ ունեցող հարցվողներին, նրանցից երկուսը վերադարձել են Արցախ՝ բարձր կապվածություն ունենալու պատճառով, մեկը դեռ ՀՀ-ում է, սակայն նախատեսում է վերադառնալ Արցախ, իսկ չորրորդը չի նախատեսում վերադառնալ: Կորուստ չունեցողների խմբում նրանք, ովքեր ավելի երիտասարդ են, ավելի ցածր կապվածություն են ունեցել Արցախին, քանի որ չեն ունեցել իրենց սեփական երկարաժամկետ ներդրումը Արցախում տնային տնտեսության մեջ: Կորուստ չունեցողների խմբում նրանք, ովքեր վերադարձել են Արցախ, ունեցել են բարձր կապվածություն Արցախին, կայուն զբաղվածություն և սեփականություն այնտեղ, ինչն էլ ապահովել է առանց այլընտրանքների քննարկման Արցախ վերադարձի փաստը:

## Կապվածությունը Հայաստանի Հանրապետությանը

Հետազոտության արդյունքները ցույց է տալիս, որ ՀՀ-ին կապվածության համար կարևոր դեր կատարող երևույթների մեջ շեշտվում են միջանձնային հարաբերություններին առնչվող գործոնները, որոնք նպաստում են տեղահանվածների ներառման գործընթացին:

Մինչ հարցազրույցների արդյունքների քննարկմանը անցնելը, հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում գործում է փախստականների և օտարերկրյա քաղաքացիների ներառման ծրագիր[8], ըստ որի ներառումը ապահովում է մի քանի մակարդակով՝ կացարանի տրամադրմամբ[9], զբաղվածության, շուկա մուտք գործելը հեշտացնելու կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունների ապահովմամբ[10], բժշկական օգնությամբ և փաստաթղթի ճանաչմամբ[11]: Այնուամենայնիվ, հետազոտությունը ցույց է տալիս, որ Հայաստանում ներառման և կապվածության ստեղծման համար կարևորվել են նաև այլ գործոններ (տե՛ս հավելված 2):

Մարդկային կորուստ ունեցողների՝ Հայաստանում կապվածության ուժեղ արտահայտման համար կարևոր դեր է խաղացել պատերազմի արդյունքում զոհված հարազատի աճյունի տեղափոխումը Եռաբլուր:

> ***Ներկա պահին էն սիտուացիան ա, որ Եռաբլուրը մոտիկ լինի ինձ, միգուցե տունս էստեղ լիներ...***
>
> *(Ե՛վ սեփականության, և՛ մարդկային կորուստ, իգական, 39 տարեկան, ՀՀ տեղափոխված)*

> ***Ճիշտն ասած հիմա չեմ կարա հաստատ ասեմ, բայց նախ և առաջ ստեղից գնալն ա, տեղափոխվելը Հայաստան...***
>
> *(Ե՛վ սեփականության, և՛ մարդկային կորուստ, իգական, 22 տարեկան, Արցախ վերադարձած)*

Բացի այդ, ներառման համար ավելի շատ կարևորվել են մարդկային հարաբերությունները և հայաստանաբնակների վերաբերմունքը, քան պետական ծրագրերից հատկացվող աջակցությունը:

Սեփականության կորուստ ունեցողների՝ ՀՀ-ին կապվածության ուժեղ արտահայտման համար կարևորվել է սեփականության տրամադրումը: Ներառման համար հավասարապես նշանակալի դեր են ունեցել հայաստանաբնակների վերաբերմունքը և հարաբերությունները, կարևորվել է նաև պետության կողմից տրամադրվող ֆինանսական և նյութական աջակցությունը:

Եթե համադրենք Արցախին և ՀՀ-ին կապվածության գործոնները, ապա կտեսնենք, որ սեփականության կորուստ ունեցողներից նրանք, ովքեր (1) չեն ստացել

բնակարան Հայաստանում և (2) չունեն շատ մոտ հարազատներ այստեղ, (3) ունեն ուժեղ արտահայտված կապվածություն Արցախին (տե՛ս հավելված 1) և (4) նվազագույնն են շփվում հարևանների և հայաստանաբնակների հետ՝ արդեն վերադարձել են Արցախ, կամ ակնկալում են վերադառնալ:

Ինչ վերաբերում է կորուստ չունեցողների խմբին, ապա նրանք, ովքեր ավելի երիտասարդ են և հնարավորություն ունեն զբաղվածություն գտնել ՀՀ-ում՝ Արցախին ավելի թույլ արտահայտված կապվածություն ունեն, քան Հայաստանին:

### Պատերազմի արդյունքում ձևավորված հիասթափություն

Հիասթափության մակարդակի որոշման համար կարևոր դեր են կատարել վստահության գործոնը, տեղահանման և կորուստ ունենալու փորձը:

Հետազոտությունը ցույց է տվել, որ պատերազմի սկզբում ինչպես կառավարության, այնպես էլ բանակի նկատմամբ հարցվողների շրջանում նկատվել է վստահության բարձր աստիճան: Սակայն պատերազմի հետևանքով վստահությունը կտրուկ նվազել է մասնավորապես կառավարության, բանակի ղեկավարության նկատմամբ *(շեշտադրվել է 23 անգամ)*: Վստահությունը նվազել է մասնավորապես այլընտրանքային աղբյուրներից տեղեկատվություն ստանալու (ծանոթներ, որոնք արտասահմանում են, ոչ հայկական լրատվամիջոցներ, ծանոթներ առաջնագծում), ինչպես նաև սեփականության ու մարդկային կորստին ականատես լինելու ժամանակ: Հատկանշական է, որ հենց զինվորների նկատմամբ վստահության մակարդակը չի նվազել:

> ***Մեր զինվորը էլի կանգնած ա, էսքան զոհերից հետո բանակը էլի կանգնած պաշտպանում ա իրա պոստերը: Ես մեր զինվորին եմ վստահում, չեն թողնելու, որ վատ բան լինի, եթե լավ ղեկավար լիներ, հիմա սենց չէր լինի: Մեր զինվորները մեզ միշտ պաշտպանելու են...***
>
> *(Մարդկային կորուստ, իգական, 31 տարեկան, ՀՀ տեղափոխված)*

Հիասթափության ընդգծված արտահայտում առկա է մասնավորապես նրանց մոտ, ովքեր ունեն սեփականության կորուստ:

> ***Թուրքը իրա դիվանագիտությունը տանում ա, թուր-***

***քը իրա չոբանից թարիփ ա անում [ցածր խավի մարդուն լավ համբավով ներկայացնել], մերոնք էլ մեր գեներալին տնազ են անում, իրանք մեծարում են իրանց, մերոնք էլ մերոնց տնազ են անում՝ նախագահին, վարչապետին, տրա համար տենց... ա դե ստեղ երկի՞ր ա, չեմ հասկանում ի՞նչ երկրի մասին ա խոսքը, ստեղ ի՞նչ երկրի մասին ա խոսքը...***

*(Սեփականության կորուստ, արական, 70 տարեկան, Արցախ վերադարձած)*

> ***Ամենագլխավորը, որ մենք դառել ենք զրո, մեր զրոն ֆինանսապես էլի...***
>
> *(Սեփականության կորուստ, իգական, 53 տարեկան, ՀՀ տեղափոխված)*

> ***Ես միշտ մտածել եմ, որ պիտի հանուն հայրենիքի ամեն ինչ անես, թեկուզ կյանքդ տաս, բայց հիմա էդ կարծիքին չեմ, դավաճանված, ծախված հողերում էնքան որ կորուստ ենք տվել, վսյո: Հիմա չեմ կարա տենց խորհուրդ տամ...***
>
> *(Մարդկային կորուստ, իգական, 31 տարեկան, Արցախ վերադարձած)*

### Ապագայի նկատմամբ վախ և անորոշություն

Ապագայի նկատմամբ վախի և անորոշության զգացում առկա է իրականացված 16 հարցազրույցից 14-ում: Սրան առնչվող մեկնաբանությունները հարցազրույցներում հանդիպել են 53 անգամ:

Ապագայի նկատմամբ վախի զգացումը կապվել է ընտանեկան կարգավիճակի հետ: Այն երկու պատմությունները, որոնցում չի նկատվել ապագայի նկատմամբ վախի և անորոշության զգացում, պատկանում են կորուստ չունեցողների խմբին, ովքեր վերադարձել են Արցախ: Վերջիններս ունեցել են փոքր ընտանիք, չեն ունեցել երեխաներ և իրենց հետագան պլանավորում են Արցախում:

Նրանք, ովքեր ունեցել են իրենց հետ ապրող երեխաներ, չեն ցանկանում իրենց

երեխաների ապագան տեսնել Արցախում, անգամ եթե իրենք վերադարձել են Արցախ: Ստորև ներկայացված են Արցախ վերադարձած կամ այժմ Հայաստանում բնակվող տեղահանվածների պատկերացումները ապագայի վերաբերյալ.

- ՀՀ-ում ապրողներ
  - գնալ Արցախ (շեշտվում է 5 անգամ),
  - մնալ ՀՀ-ում (շեշտվում է 5 անգամ),
  - մեկնել արտերկրիր (շեշտվում է 2 անգամ),
- Արցախում ապրողներ
  - գնալ ՀՀ (շեշտվում է 3 անգամ),
  - մնալ Արցախում (շեշտվում է 6 անգամ),
  - մեկնել արտերկիր (շեշտվում է 1 անգամ):

Հիասթափության ընդգծված արտահայտում և սեփականության կորուստ ունեցող մարդիկ համեմատաբար հազվադեպ են շփվում ՀՀ-ում իրենց ժամանակավոր հարևանների հետ և համեմատաբար ավելի բացասական կարծիք են արտահայտում հայաստանաբնակների վերաբերյալ: Միևնույն ժամանակ, նրանց կապվածությունը Հայաստանին միջին և բարձր է, և նրանք պլանավորում են իրենց ապագան Հայաստանում:

> ***Իմաստ չկա, ես ու՞ր գնամ, մեկա [տեղանուն Արցախում, որը գտնվում է Ադրբեջանի վերահսկողության տակ] չեմ գնալու: Ինձ համար տարբերություն չկա՝ ստեղ թե Էնտեղ: Ոչ մի ձևով իմաստավորված չի իմ Էնտեղ գնալս, տանելու Էն Էլի մի գյուղ, որ ինձ համար վաբշե խորթա: Խոսք չունեմ Ղարաբաղը հարազատա որպես Ղարաբաղ, բայց մեկա դա էլ իմ Ղարաբաղս չի, իմս արդեն վերջացելա՝ իմաստ չկա ոչ մի ձևի...***
>
> *(Սեփականության կորուստ, իգական, 53 տարեկան, ՀՀ տեղափոխված)*

Հետազոտությունից պարզ է դարձել, որ նրանք, ովքեր ունեն ինչպես մարդկային, այնպես էլ սեփականության կորուստ, ցանկություն չեն հայտնում Արցախում բնակվելու, իսկ Արցախ վերադարձածները պլանավորում են նորից վերադառնալ Հայաստան: Նրանցից մեկը երիտասարդ է, և նրա՝ Արցախ վերադառնալը կապված է եղել

ծնողներից կախված լինելու հետ, իսկ երկրորդը Արցախ է վերադարձել որոշակի գործեր կարգավորելու և կրկին Հայաստան վերադառնալու նպատակով:

Ինչ վերաբերում է կորուստ չունեցողների խմբին, ապա նրանք, ովքեր ավելի երիտասարդ են և հնարավորություն ունեն զբաղվածություն գտնել ՀՀ-ում, Արցախին ավելի ցածր արտահայտված կապվածություն ունեն, առկա են ապագայի վախի և պատերազմի հնարավոր կրկնման պատկերացումներ, ուստի նրանք իրենց ապագան նույնպես տեսնում են Հայաստանում:

> ***Էլի կարող ա պատերազմ լինի, ու դու միանգամից մտածում ես հարազատներիդ մասին, որ հեսա պատերազմից, փառք Աստծո, լավ դուրս եկան, ու հիմա նորից մի բան լինի... Անընդհատ սենց դողում ես էլի իրանց վրա...***
>
> *(Կորուստ չունեցող, իգական, 22 տարեկան, ՀՀ տեղափոխված)*

Պատերազմի կրկնման վերաբերյալ մտահոգություն/կանխատեսումներ/ նկատվել են նաև սեփականության կորուստ ունեցողներից ոմանց մոտ:

> ***Պատերազմը տակի տակ լինելու ա, կամ մերոնք պետք ա սկսեն կամ էլ՝ իրանք, սենց երկար չի շարունակվելու, կամ մերոնք պիտի սկսեն էն տված հողերը հետ վերցնեն կամ իրանք են սկսելու ավելի շատ հող վերցնեն...***
>
> *(Սեփականության կորուստ, արական, 63 տարեկան, ՀՀ տեղափոխված)*

Հատկանշական է, որ ապագայի հեռանկարներում որպես իրավիճակին լուծում տվող կողմեր ներկայացվում են հայ զինվորները, ռուս խաղաղապահները կամ Ռուսաստանը՝ որպես դաշնակից երկիր, սակայն ոչ ներկայիս կառավարությունն իր ռազմավարական քայլերով: Մասնակիցներից ոմանք գտնում են, որ իրավիճակի դրական փոփոխությունները կարող են տեղի ունենալ ներկայիս կառավարության փոփոխությունից հետո միայն: Որոշները կարծում են, որ կառավարությունը պետք է կենտրոնանա պետության հզորացման և կոնկրետ ռազմավարության մշակման վրա, այլապես Հայաստանը նույնպես կկորսվի:

> ***Եթե իշխանությունը փոխվի,12 ես հավատում եմ, որ էս ճգնաժամը կվերանա: Եթե վլասծը փոխվի, դաժե եթե հներն էլ գան, էլ ժողովուրդը նույնը չեն, դաժե եթե կաշառակեր լինեն կամ թալանչիներ, ժողովուրդը չպիտի սուս մնա...***
>
> *(Ե՛վ սեփականության, և՛ մարդկային կորուստ, իգական, 45 տարեկան, ՀՀ տեղափոխված)*

> ***Եթե կառավարությունը կոնկրետ քայլեր չմտածի, պլաններ չմշակի ուժեղացնելու համար Հայաստանը, այսինքն՝ Հայաստանն էլ Արցախն էլ նույնն են, վատ ա լինելու, եթե մնա սենց, ոնց որ կա, վատ ա լինելու, ավելի վատ հետևանքներ կարա լինի, կարող ա Հայաստանն էլ կորցնենք...***
>
> *(Սեփականության կորուստ, արական, 63 տարեկան, ՀՀ տեղափոխված)*

Հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ Արցախ վերադառնալու հիմնական խոչընդոտողը վախի և անորոշության զգացումն է ապագայի նկատմամբ: Սա արտահայտվում է նրանով, որ անգամ այն մարդիկ, ովքեր կարող են Արցախ վերադառնալու հնարավորություններ ստեղծել, ցանկություն են հայտնում մնալ Հայաստանում, քանի որ նոր պատերազմի, շրջափակման և կորուստներ ունենալու մտավախություններ ունեն:

Կենսափորձերում, որպես պատերազմի հետևանքով կարևորված և իմաստավորված երևույթներ, մի կողմից ընդգծվում է քաղաքական ինստիտուտների հանդեպ անվստահության խորացումը և ապագայի անորոշության ու կենսական վտանգվածության ռիսկերը, իսկ մյուս կողմից՝ միասնականության անհրաժեշտությունը և ունեցվածքի արժևորումը:

12. Հարցազրույցը տեղի է ունեցել 2021թ. հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններից առաջ:



# Ամփոփում

## Պատերազմի սկիզբ

- Պատերազմի վերաբերյալ պատկերացումները պատերազմի սկսվելու պահին հիմնականում նույնականացվել են կարճաժամկետ ռազմական գործողությունների հետ:
- Նրանք, ովքեր սկսվող ռազմական գործողությունները առաջին օրերին նույնականացրել են լայնամասշտաբ պատերազմի հետ, ականատես են եղել Ստեփանակերտի հրետակոծությանը, որը շեղել է պատկերացումները Ապրիլյան պատերազմից:
- Մարդկային կորուստ չունեցող հարցվողների մոտ կարճաժամկետ պատերազմի պատկերացումները հիմնականում պահպանվել են մինչ պատերազմի ավարտը, իսկ մարդկային կորուստ ունեցողների մոտ փոխվել են հարազատին կորցնելու օրվանից սկսված:
- Պատերազմի վերաբերյալ պատկերացումների փոփոխության գործում կարևորվել է նաև այլընտրանքային լրատվամիջոցներին հետևելը, որտեղ ներառվել են ինչպես հակառակորդի լրատվամիջոցները, այնպես էլ առաջնագծում անձնական աղբյուրները:

## Տեղահանում

- Արցախից ՀՀ տեղահանման ամենահաճախ հանդիպող ժամանակահատվածը առաջին 1-1,5 շաբաթն է, ընդ որում, տեղահանման որոշումը եղել է ինչպես հարկադրված, այնպես էլ՝ կամավոր:
- պատերազմին մասնակից մոտ հարազատներ (որդի, ամուսին, եղբայր) ունեցող տեղահանվածների դեպքում նկատվել է դավաճանության և

մեղքի զգացումի արտահայտում:

- Հայաստան տեղափոխվելու և ընթացքում աջակցություն ստանալու գործընթացում տեղահանվածների կենսափորձում ամենահաճախը հիշատակվում է օգնություն առաջին հերթին անհատներից, և միայն հետո՝ պետությունից:
- Անհատական մակարդակում ավելի հաճախ հանդիպում է ծանոթների օգնությունը:
- Պետական մակարդակում մասնակիցները նշանակալի օգնություն են ստացել ՏԻՄ-երից:

## ՀՀ-ում հաստատվելը

- Հայաստանում մնացած արցախցիների՝ Արցախ չվերադառնալու հիմնական դրդապատճառներն են *Արցախում ապրելու վախը, ապագայի հեռանկարների կորուստը, սեփականության կորուստը և մահացած հարազատը Եռաբլուրում:*
- մարդկային կորուստ ունեցողների՝ Հայաստանում կապվածության ստեղծման համար կարևոր դեր է խաղացել հարազատի տեղափոխումը Եռաբլուր: Բացի այդ, ներառման համար ավելի կարևորվել են մարդկային հարաբերությունները և հայաստանաբնակների վերաբերմունքը, քան պետական ծրագրերի արդյունքում տրվող աջակցությունը:
- Սեփականության կորուստ ունեցողների՝ Հայաստանում հաստատման և կապվածության ստեղծման համար կարևորվել է սեփականության տրամադրումը:
- Կորուստ չունեցողների խմբում նրանք, ովքեր ավելի երիտասարդ են և հնարավորություն ունեն աշխատելու ՀՀ-ում, ունեն ապագայի նկատմամբ վախի և անորոշության բարձր զգացում, ուստի չեն ցանկանում վերադառնալ Արցախ:

## Վերադարձ Արցախ

- Արցախին կապվածության ամենաազդեցիկ գործոններն են՝ *մահացած հարազատի աճյունը Արցախում, պատերազմից հետո Արցախի հասանելի տարածքները, որոնց հետ կապված կան ուժեղ հիշողություններ, Արցախում հաստատման հեռանկարները, որոնք ապահովվում են այնտեղ զբաղվածություն գտնելու հնարավորություններով, հեղինակությամբ և ծանոթների առկայությամբ, և սեփականության առկայությունը Արցախում:*

- Միայն մարդկային կորուստ ունեցողները հիմնականում ուժեղ արտահայտված կապվածություն ունեն Արցախի հետ: Կորուստ չունեցողների խմբում նրանք, ովքեր վերադարձել են Արցախ, ունեցել են բարձր կապվածություն Արցախին, կայուն զբաղվածություն և սեփականություն:

## Ապագայի պատկերացումներ

- Արցախ վերադարձի համար հիմնական խոչընդոտողը վախի և անորոշության զգացումն է ապագայի նկատմամբ:
- Պատերազմի սկզբում ինչպես կառավարության, այնպես էլ բանակի նկատմամբ հարցվողների շրջանում նկատվել է վստահության բարձր մակարդակ: Սակայն պատերազմի ավարտին վստահության մակարդակը կտրուկ նվազել է մասնավորապես կառավարության, բանակի ղեկավարության նկատմամբ, սակայն հենց զինվորների նկատմամբ վստահության մակարդակը չի նվազել:
- Ինչպես սեփականության, այնպես էլ մարդկային կորուստ ունեցողներն իրենց ապագան չեն տեսնում Արցախում:
- Ապագայի հեռանկարներում որպես իրավիճակին լուծում տվող կողմեր ներկայացվում են հայ զինվորները, ռուս խաղաղապահները կամ Ռուսաստանը՝ որպես դաշնակից երկիր, սակայն ոչ ներկայիս կառավարությունն իր ռազմավարական քայլերով:
- Մասնակիցները գտնում են, որ իրավիճակի դրական փոփոխությունները կարող են տեղի ունենալ ներկայիս կառավարության փոփոխությունից հետո միայն (հարցազրույցներն իրականացվել են 2021թ.խորհրդարանական ընտրություններից առաջ):

# Հավելված 1.
# Հետազոտության մասնակիցների կապվածությունը Արցախին[13]

| | Մարդկային կորուստ | | | | Սեփականության կորուստ | | | | Սեփականության և Մարդկային կորուստ | | | | Կորուստ չունեցող | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ | | ԱՎ | | ՀՀ | | ԱՎ | | ՀՀ | | ԱՎ | | ՀՀ | | ԱՎ | |
| Կապվածությունն Արցախին | 1.1 | 1.2 | 1.3 | 1.4 | 2.1 | 2.2 | 2.3 | 2.4 | 3.1 | 3.2 | 3.3 | 3.4 | 4.1 | 4.2 | 4.3 | 4.4 |
| Անձնական մասնակցություն պատերազմին | - | - | - | - | + | - | - | - | - | - | - | - | - | - | + | + |
| Ընտանիքի անդամի մասնակցություն պատերազմին | + | + | + | + | + | - | + | - | + | + | + | + | + | + | + | - |
| Հարաբերություններ շրջապատի հետ | + | + | + | + | + | + | + | + | + | + | - | + | + | + | + | + |
| Բնակավայրին մոտ հարմարություններ (դպրոց, մանկապարտեզ, հիվանդանոց...) | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | - | + | + |
| Մասնակցություն համայնքային իրադարձություններին | - | + | - | - | + | ԿՉ | + | + | - | - | - | - | - | - | - | + |

13. Ինչպես հավելված 1-ում, այնպես էլ հավելված 2-ում գնահատված են հետազոտության մասնակիցների կապվածության մակարդակները: Աղյուսակի ձախ կողմում նշված են գործոնները, որոնց մակարդակը գնահատվում է: Աղյուսակի աջ հատվածը բաժանված է ըստ հետազոտական չորս խմբի: Յուրաքանչյուր խումբը ներառում է 4-ական մասնակից, որոնցից երկուսը հաստատվել են ՀՀ-ում, երկուսը վերադարձել են Արցախ:
Յուրաքանչյուր մասնակցի սյունակում գնահատված է գործոնների առկայությունը (+), կամ բացակայությունը (-) վերջինիս կենսափորձում: Աղյուսակում «ԿՉ» հապավումը նշանակում է «կիրառելի չէ»: Այն տեղադրվել է այն ժամանակ, երբ աղյուսակի ձախ հատվածում առկա գործոնի մասին չի խոսվել տվյալ կենսափորձում, առկա չեն եղել կողեր, որոնք անուղղակիորեն մատնանշում են գործոնը և/կամ գործոնը կիրառելի չէ՝ կենսափորձի ընտրման չափանիշի յուրահատկությունից ելնելով:
Հապավումների բացատրություն՝ ՀՀ- Հայաստան տեղափոխված, ԱՎ- Արցախ վերադարձած

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Այլ սեփականություն (խոշոր եղջերավոր անասուններ, խա-նութ, հողատարածք) | - | - | + | - | + | + | + | + | + | + | + | + | - | - | + | - |
| Տուն/բնակարան Արցախում ՊԱ | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| Տուն/բնակարան, այլ սեփ. Արցախում ՊՀ | + | + | + | + | - | - | - | - | - | - | - | - | + | + | + | + |
| Աշխատանք Արցա-խում պատերազմից առաջ | - | + | + | + | + | + | - | + | + | + | + | + | + | + | + | + |
| Աշխատանք Արցա-խում պատերազմից հետո | - | - | + | + | - | - | - | + | - | - | + | - | - | - | + | + |
| Ընտանիքի անդամ-ների զբաղվածու-թյուն Արցախում | + | + | - | + | - | - | + | + | - | - | + | - | + | + | + | - |
| Հեղինակություն համայնքում | + | + | + | - | ԿՀ | + | ԿՀ | + | - | ԿՀ | - | - | - | - | ԿՀ | ԿՀ |
| Հարազատի աճյուն/ հուշ Արցախում | + | + | + | + | - | - | - | + | - | - | - | - | - | - | - | - |
| Հարազատներ/ բարե-կամներ Արցախում ՊՀ | + | + | + | + | - | - | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| Մասնակցություն Արցախյան առաջին պատերազմին | - | + | - | - | + | - | ԿՀ | - | - | - | - | - | - | - | - | - |
| Արցախում մնացած արժեքավոր իրեր | + | + | + | ԿՀ | + | + | + | + | + | + | + | + | - | - | ԿՀ | ԿՀ |
| Պատերազմից հետո Արցախում հասանե-լի տեղեր, որոնց հետ կապված կան ուժեղ հիշողություններ | + | + | + | + | + | - | + | + | - | - | - | - | - | + | ԿՀ | ԿՀ |

# Հավելված 2.
# Հետազոտության մասնակիցների կապվածությունը ՀՀ-ին

| | Մարդկային կորուստ | | | | Սեփականության կորուստ | | | | Սեփականության և Մարդկային կորուստ | | | | Կորուստ չունեցող | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ | | ԱՎ | | ՀՀ | | ԱՎ | | ՀՀ | | ԱՎ | | ՀՀ | | ԱՎ | |
| Կապվածությունն Արցախին | 1.1 | 1.2 | 1.3 | 1.4 | 2.1 | 2.2 | 2.3 | 2.4 | 3.1 | 3.2 | 3.3 | 3.4 | 4.1 | 4.2 | 4.3 | 4.4 |
| Հայաստանաբնակների վերաբերմունք | + | + | + | + | - | - | - | - | - | + | + | + | + | + | + | + |
| Օգնող ծանոթներ/հարազատներ Հայաստանում | - | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| Անծանոթների օգ-նություն/աջակցություն (նյութական, ֆինանսական) | + | + | + | + | + | + | + | + | + | + | ԿՉ | + | + | + | - | - |
| Նյութական աջակցություն պետության կողմից | + | + | + | + | + | + | + | + | + | + | ԿՉ | + | + | + | ԿՉ | ԿՉ |
| Ֆինանսական աջակցություն պետության կողմից | + | ԿՉ | ԿՉ | + | + | + | ԿՉ | + | + | + | ԿՉ | + | + | ԿՉ | ԿՉ | ԿՉ |
| Ֆինանսական կարգավիճակ | - | + | - | + | + | + | + | - | + | - | + | + | + | + | + | + |
| Առողջական աջակցություն | - | - | - | - | - | + | - | - | - | - | - | - | + | - | - | - |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Առանձին կացարանի տրամադրում | + | - | + | + | + | + | - | + | + | - | - | - | + | + | + | - |
| Ժամանակավոր կացարանի վարձակալում | + | - | - | - | + | + | - | - | - | + | - | - | + | + | - | - |
| Զբաղվածություն -Հայաստանում | - | - | - | - | + | - | - | - | - | - | - | - | - | + | - | - |
| Զբաղվածության հնարավորություն հետագայում | - | - | - | - | + | - | - | - | - | + | + | + | + | + | - | + |
| Տուն/բնակարան -Հայաստանում | - | + | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Հարաբերություններ հարևանների/ հայաստանաբնակների հետ | + | - | + | - | - | + | - | - | + | - | - | + | - | - | + | + |
| Կենցաղային պայմաններ Հայաստանում Տեղափոխվելու սկզբնական շրջանում | - | - | - | - | + | - | + | + | - | + | + | + | - | + | + | + |
| Կենցաղային պայմաններ Հայաստանում հաստատվելուց հետո | - | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| Հստակ կարգավիճակ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Հարազատի աճ-յուն Եռաբլուրում | - | - | - | +* | ԿՉ | ԿՉ | ԿՉ | ԿՉ | + | + | + | - | ԿՉ | ԿՉ | ԿՉ | ԿՉ |

*տվյալ մասնակցի հարազատի աճյունի մի մասը տեղափոխվել է Եռաբլուր, մյուս մասը հանգչում է Արցախում:

# Հավելված 3.
# Խորին հարցազրույցի ուղեցույց

**Մարտ, 2021**

**Բարև Ձեզ, ես _____ եմ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ) – Հայաստան հիմնադրամից:**

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան անկախ հետազոտական հիմնադրամը իրականացնում է հետազոտություն Արցախյան 2-րդ պատերազմի ընթացքում արցախցիների փորձի ու կենսագործունեության, ապագայի տեսլականի և հետագա քայլերի վերաբերյալ:

Համաձայնելով մասնակցել մեր հարցազրույցին, հնարավորություն կտաք էլ ավելի խորը և ամբողջական պատկերացում կազմել այդ իրադարձության ընթացքում տեղի ունեցած գործողությունների ու մարտահրավերների մասին:

Մեր զրույցը կտևի մոտավոր 1,5 ժամ:Համաձա՞յն եք մասնակցել հարցմանը:

- **ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՍԿԻԶԲ**

- ***<u>Մինչև տեղահանումը</u>***

1. Խնդրում եմ մի փոքր պատմեք Ձեր և Ձեր ընտանիքի մասին:

   - **ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑ:**

   1.1. Ինչպիսի՞ն էր Ձեր առօրյան, սովորական օրը:Որտե՞ղ և ո՞ւմ հետ էիք ապրում մինչև պատերազմը:
   1.2. Ինչո՞վ էիք զբաղվում, ի՞նչ մասնագիտություն ունեք Դուք և Ձեր ընտանիքի անդամները (երեխաները, մեծահասակները): Կնկարագրե՞ք այն միջավայրը, որտեղ բնակվում էիք/եք:Ովքե՞ր էին/են Ձեր հարևանները:Ինչպիսի՞ փոխհարաբերություններ ունեիք/ունեք նրանց հետ:

1.3. Ի՞նչ ծառայություններ/հաստատություններ էին հասանելի Ձեր տարածաշրջանում (դպրոց, առողջապահական ծառայություններ և այլն)

2. Որտե՞ղ էիք այն ժամանակ, երբ իմացաք, որ պատերազմ է սկսվել, ո՞ւմ հետ էիք, ի՞նչ էիք անում:Որտե՞ղ էին Ձեր հարազատները:Որո՞նք էին առաջին գործողությունները:
3. Ե՞րբ հասկացաք, որ պատերազմ է սկսել: Ո՞րն է պատերազմի բռնկման Ձեր առաջին հիշողությունը:
4. Պատերազմի բռնկումից հետո որքա՞ն ժամանակ մնացիք Արցախում, ինչո՞ւ մնացիք, ի՞նչն էր Ձեզ պահում/ի՞նչը պահեց այնտեղ:Խնդրում եմ պատմեք այդ ընթացքի ամենատպավորիչ հիշողությունների, իրադարձությունների, դեպքերի ու մարդկանց մասին:
5. Ե՞րբ/ո՞ր փուլում հասկացաք, որ այս պատերազմը Ապրիլյանի պես կարճաժամկետ չէ, այլ երկարաժամկետ է: Ի՞նչ տեղի ունեցավ, որ սկսեցիք այն որպես երկրաժամկետ պատերազմ ընկալել:

Հիմա մի փոքր խոսենք տեղահանման Ձեր պատմության մասին

- ***Տեղահանում***

6. Ինչպե՞ս և ե՞րբ եկաք Հայաստան: Ինչո՞ւ հենց այդ ժամանակ:

   - **ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑ:**

   5.1 Ինչպե՞ս որոշվեց , ո՞վ որոշեց:Ի՞նչ տարբերակներ քննարկվեցին:

7. Կնկարագրե՞ք տեղափոխվելու գործընթացը:Ո՞ւմ հետ տեղափոխվեցիք:Ի՞նչ վերցրիք Ձեզ հետ:Ովքե՞ր օգնեցին, ինչպե՞ս:
8. Տեղափոխման ընթացքում կայի՞ն դժվարություններ, եթե այո՝ որո՞նք էին դրանք:Ինչպիսի՞ ճանապարհ անցաք:Ո՞ր հատվածում/փուլում ինչպիսի՞ աջակցող և/կամ խանգարող մարդիկ/խմբեր, օգնող և/կամ խոչընդոտող հանգամանքներ կային:
9. Ո՞րն էր տեղափոխման գործընթացում ամենատպավորիչ դեպքը/պատմությունը Ձեզ համար:Մանրամասնեք, խնդրեմ:
10. Եթե հնարավոր լիներ այդ ժամանակ հետ վերադառնալ, ի՞նչը այլ կերպ կփորձեիք կազմակերպել, ի՞նչ  իր/իրեր կվերցնեիք, որ չեք վերցրել Ձեզ հետ:

○ ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑ:

9.1. Ինչո՞ւ չէիք այդ իրերը վերցրել այն ժամանակ: Ինչու՞ հենց դա/դրանք կվերցնեիք:Վերցրած իրերից ո՞րն է/էր ամենաարժեքավորը, ինչո՞ւ:

9.2. Նամակներ, նկարներ կամ հուշեր ներկայացնող այլ իրեր վերցրե՞լ եք Ձեզ հետ: Ինչի՞ մասին են դրանք, ինչո՞ւ հենց դրանք:

● ***Փոխօգնություն/ Հարմարում***

11. Ո՞վ դիմավորեց Ձեզ, երբ եկաք Հայաստան:Ո՞ւր տեղափոխվեցիք, ո՞ր բնակավայր, ո՞ւմ/ի՞նչ տուն էր դա, ինչպե՞ս գտաք այն:Ովքե՞ր էին օգնում Ձեզ:
12. Որո՞նք էին առաջին տպավորությունները:

○ ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑ:

11.1. Ի՞նչ դեպքեր են տպավորվել Հայաստան տեղափոխվելու առաջին օրերի վերաբերյալ:

13. Ովքե՞ր էին առաջին մարդիկ, որոնց հետ կապ հաստատեցիք Հայաստան հասնելուց հետո:Նկարագրեք բոլոր հնարավոր դեպքերը:
14. Ի՞նչ կարգավիճակով եք Հայաստանում: Ինչպե՞ս եք տեղեկացվել Ձեր կարգավիճակի մասին (օր՝. տեղեկատվական խմբեր, հանդիպումներ, խորհրդատվություններ, ցուցումներ կարգավիճակի և հետագա հնարավորությունների վերաբերյալ)
15. Ինչպիսի՞ն էր/է Ձեր և տեղացիների հարաբերությունները: Ո՞ւմ եք հիշում ամենից շատը:Ինչո՞ւ:
16. Կնկարագրե՞ք Ձեր առօրյան Հայաստան տեղափոխվելու առաջին օրերին:

○ ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑ:

15.1. Ինչո՞վ էիք զբաղվում օրվա հիմնական մասը: Ո՞ւմ հետ էիք շփվում: Ովքե՞ր էին Ձեզ օգնում: Ինչպիսի՞ն էր Ձեր ընտանիքի անդամների առօրյան:

17. Այդ ընթացքում ինչպիսի՞ աջակցության, իրազեկման կարիք ունեիք: Ո՞ւմ հետ էիք կապ պահպանում և ստանում օգնություն (ՀՀ կառավարություն, ԱՀ կառավարություն, տեղի համայնք, սոցիալական աշխատողներ և/կամ հոգեբաններ, ՀՀ-ում բնակվող հարազատներ և/կամ ընկերներ և այլն): Մանրամասն նկարագրեք յուրաքանչյուր կողմին:

○ **ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑ:**

16.1. Բավարարու՞մ էր տրամադրվող աջակցությունը/օգնությունը: Եթե ոչ, ինչո՞ւ:

16.2. Այդ ընթացքում աջակցության ինչպիսի՞ կարիքներ եք ունեցել *(օր՝.ֆինանսական աջակցություն, հոգեբանական աջակցություն, սոցիալական աջակցություն, ներառվելու խնդիրներին առնչվող աջակցություն, կրթություն, առողջություն):* Ինչպե՞ս եք բարձրաձայնել դրանք, ո՞ւմ եք դիմել, ովքե՞ր են արձագանքել *(օր՝.ՀՀ կառավարություն, ԱՀ կառավարություն, տեղի համայնք, սոցիալական աշխատողներ և/կամ հոգեբաններ, ՀՀ-ում բնակվող հարազատներ և/կամ ընկերներ և այլն):*

16.3.Ինչպե՞ս են բարձրաձայնված խնդիրները լուծում ստացել: Բավարարո՞ւմ էր, արդյոք, տրամադրվող աջակցությունը: Եթե ոչ, ինչո՞ւ:

18. Եթե փորձեք առանձնացնել, ովքե՞ր էին, որ պատերազմի սկզբից մինչ այժմ կարևոր դեր են խաղացել Ձեզ օգնելու հարցում:Ինչպե՞ս և ինչո՞ւ:
19. Ինչպիսի՞ դժվարությունների էիք հանդիպում տեղափոխված բնակավայրում: Ինչպիսի՞ն են/էին Ձեր մշտական բնակավայրի և տեղափոխված վայրի առօրյայի տարբերությունները:

● ***<u>ՀՀ-ում մնացած խումբ</u>***

20. Ինչպիսի՞ն է Ձեր առօրյան, սովորական օրն այսօր:Որտե՞ղ եք ապրում, ինչո՞վ եք զբաղվում այժմ:
21. Ունե՞ք արդյոք աշխատանք:

○ **ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑ:**

21.1. եթե այո, ինչպե՞ս եք գտել այն: Ինչպիսի՞ն է աշխատանքի բնույթը, որքանո՞վ է հնարավորություն տալիս հոգալ սեփական կարիքները:

21.2. եթե ոչ, ապա ի՞նչ պլաններ ունեք, ի՞նչ եք պատրաստվում անել, ի՞նչ աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ:

22. Որտե՞ղ եք պլանավորում ապրել հետագայում:

○ **ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑ:**

22.1. Պլանավորու՞մ եք վերադառնալ մշտական բնակության վայր, եթե այո/ոչ՝ ինչո՞ւ:

23. Պատերազմից հետո այցելե՞լ եք Արցախ:

○ **ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑ:**

23.1. Եթե ոչ՝ ինչո՞ւ: Կցանկանայի՞ք գնալ, ինչո՞ւ:

23.2. Եթե այո, ե՞րբ, ի՞նչ նպատակով: Ի՞նչ զգացողություններ ապրեցիք, երբ գնացիք առաջին անգամ:

● ***Արցախ վերադարձած խումբ***

24. Մի փոքր պատմեք Ձեր և Ձեր ընտանիքի մասին:Ինչպիսի՞ն է Ձեր առօրյան, սովորական օրն այսօր:Որտե՞ղ եք ապրում, ինչո՞վ եք զբաղվում:Իսկ ինչո՞վ եք զբաղվում այժմ:

*Աշխատանք, եթե այո, ինչպե՞ս են գտել աշխատանքը, բնույթը աշխատանքի, ծանրաբեռնվածությունը, ինչքանո՞վ է հնարավորություն տալիս հոգալ սեփական կարիքները:*

*Եթե չկա աշխատանք, ապա ի՞նչ պլաններ կան, ինչպե՞ս են պատրաստվում իրենց հետագա կյանքը կառուցել ՀՀ-ում, ի՞նչ աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ:*

25. Ո՞ւմ հետ եք ապրում, որտե՞ղ: Կնկարագրե՞ք Ձեր միջավայրը:Ովքե՞ր են Ձեր հարևանները:Ինչպիսի՞ փոխհարաբերություններ ունեք նրանց հետ:
26. Ի՞նչ զգացողություններ ապրեցիք, երբ պատերազմից հետո առաջին անգամ վերադարձաք Արցախ: Ի՞նչ նպատակով էիք գնում, ե՞րբ էր դա, արդյո՞ք դրանից հետո հետ վերադարձել եք ՀՀ: Եթե այո/ոչ ՝ ինչո՞ւ:
27. Ե՞րբ և ինչպե՞ս որոշեցիք վերադառնալ Արցախ: Ո՞վ որոշեց, ովքե՞ր էին կողմ/դեմ: Ինչո՞ւ:Մանրամասն նկարագրե՛ք:
28. Արդյոք պլանավորո՞ւմ եք հետ գնալ ՀՀ, թե՞ մնալու եք այստեղ: Եթե այո/ոչ՝ ինչո՞ւ:
29. Արդյո՞ք վերադառնալուց հետո ձեր կյանքում և առօրյայում փոփոխություն է եղել: Եթե այո, ինչպե՞ս և ինչո՞ւ:
30. Որտե՞ղ եք այժմ բնակվում: Ո՞ւմ հետ եք բնակվում: Ինչո՞վ է տարբերվում, ինչքանո՞վ եք բավարարված: Որտե՞ղ եք պլանավորում հետագայում բնակվել, ո՞ւմ հետ:

● ***Երկու խմբերին***

31. Ինչպիսի՞ հետք է թողել Արցախյան պատերազմը Ձեզ և Ձեր ընտանիքի վրա:

○ **ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑ:**

29.1. Ո՞րն էր պատերազմի խորհուրդը, ի՞նչ ցույց տվեց, ինչի՞ մասին մտածել տվեց:Ինչո՞ւ:

32. Եթե նկարագրեք այսօրվա Հայաստանը և Արցախը, ինչպե՞ս կնկարագրեք: Ինչպիսի՞ երկիր է Հայաստանը/Արցախը այսօր, ինչպիսի՞ն կլինի վաղը:
33. Փաստացի պատերազմից հետո ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ Արցախում տեղակայվել են ռուս խաղաղապահները, իսկ գրավված տարածքներում մեծացել է ադրբեջանցիների հետ համակեցության հեռանկարը: Ըստ Ձեզ, ինչպիսի՞ն կլինեն այդ փոխհարաբերությունները:
34. Ինչպե՞ս եք պատկերացնում Ձեր ապագան: Որո՞նք են Ձեր հետագա գործողությունները, ակնկալիքները և նպատակները:

## Շնորհակալություն մասնակցության համար



NED NATIONAL ENDOWMENT FOR DEMOCRACY

SUPPORTING FREEDOM AROUND THE WORLD

CRRC Armenia